ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 208 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի մարտի 6-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Թադեոս եկեղեցու տարածքում շինարարական, կառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N 161-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԿԱՐԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00054589) 2024 թվականի փետրվարի 14-ին կնքված՝ N ՎԸ-009/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սուրբ Թադեոս եկեղեցու

արտաքին լուսավորման լուսատուների տեղադրման համար նախատեսված դրենաժային համակարգի կառուցման աշխատանքների իրականացում 5,963,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍԱՐ ՊՐՈՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02282013) 2024 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N ՎԸ-008/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սուրբ Թադեոս եկեղեցու երիցատան 2-րդ հարկի լուսամուտների, արտաքին և ներքին դռների, ինչպես նաև մոմավառության սրահի դռների և ապակե փաթեթների պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրականացում 8,976,800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

01.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ